

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

### Հաշվետվություն

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 2017-2018 ուս. տարվա

/գիտխորհրդի նիստ, 5 դեկտեմբերի, 2018թ./

#### Օրակարգ

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանի հաշվետվությունը՝ ֆակուլտետի 2017-2018 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 26-ը: Նիստը նախագահող Ս. Գասպարյանը առաջարկեց դեկանի ելույթի համար հատկացնել 15 րոպե, իսկ մյուս ելույթների համար՝ 5-ական րոպե: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց տվյալ ընթացակարգը:

#### 1. ԼՍԵՑԻՆ՝

**Ս. Աբրահամյան՝** Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոց.

/հաշվետվությունը կցված է/

#### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

**Ա. Գասպարյան՝** Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ

Ակնհայտ է, որ ֆակուլտետում զգալի աշխատանք է կատարվել, և իհարկե դա չի նշանակում, որ պետք է բավարարվենք արածով, քանի որ դեռևս շատ բան ունենք անելու ապագայում: Այն երկու ամիսները, որ մենք անցկացրեցինք Իտալիայի Կաֆոսկարի համալսարանում ցույց տվեց, որ այնտեղ սովորող մեր ուսանողները իրոք շատ լավն են, պարտաճանաչ, գերազանց սովորող, լավ պատրաստված: Նրանցից երկուսին առաջարկվել է անվճար սովորել մագիստրատուրայում: Ասածս վկայում է, որ մենք լավ ենք աշխատում:

**Ռ. Ղազարյան՝** Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ

Դեկանի ելույթում շատ համակողմանի ներկայացվեց հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում կատարված աշխատանքները: Իրոք, շատ մեծ աշխատանք է կատարվել: Պարոն Աբրահամյանը լավ է ղեկավարում ֆակուլտետը: Մեր ֆակուլտետի ուսանողները, մասնավորապես ուզում եմ նշել թարգմանչական բաժնի ուսանողներին, հանրապետությունում իրականացված բազմաթիվ միջոցառումների են մասնակցել և շնորհակալագրեր են ստացել լավ աշխատանքի համար:

**Շ. Պարոնյան՝** Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ

Դեկանը շատ լավ ներկայացրեց ամբիոնների կատարած աշխատանքները: Ուզում եմ միայն ավելացնել, որ մենք իրոք լավ ենք աշխատում, նամանավանդ, եթե հաշվի առնենք, թե ուսումնառության ինչպիսի տեխնիկական և այլ հնարավորություններ ունեն արտերկրյա համալսարանի ուսանողները, և ինչպիսիք չունեն մեր ուսանողներն ու դասախոսները: Կարևոր եմ համարում համալսարանի միջազգայնացումը, հատկապես օնլայն դասընթացների կազմակերպումը, որը կմտնի է դասախոսների ծանրաբեռնվածության մեջ: Մենք հիմա ունենք առարկաներ, որոնք կարելի է օնլայն ձևաչափով անցկացնել աշխատանքով ծանրաբեռնված ուսանողների հետ:

## **Հ. Բաղդասարյան՝** Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ

Միանալով իմ գործընկերներին՝ ավելացնեմ, որ հարգարժան դեկանը մշտապես մեզ սատարում է, աջակցում է ցանկացած հարցում: Ֆակուլտետը մեծ ձեռքբերումներ է գրանցել: Ունենք նաև շատ խնդիրներ: Կուզենայի մոտ ապագայում պորտուգալերենի ներմուծման հետ կապված որոշակի խնդիրների լուծումը գտնել:

## **Ա. Ղազարյան՝** Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ

Տեխնիկական միջոցների առումով ֆակուլտետը լիովին հագեցած չէ: Նաև ուզում եմ բարձրաձայնել ուսումնական պրակտիկայի հետ կապված մեկ հարց: Կուզենայինք հնարավորինս շուտ տեղեկացվել, թե որտեղ է անցկացվելու մեր պրակտիկան:

## **Գ. Գևորգյան՝** ԵՊՀ պրոռեկտոր

Ուսումնական պրակտիկայի առումով ուզում եմ հայտնել ձեզ, որ համալսարանի բոլոր ֆակուլտետներում պրակտիկայի չորսշաբաթյա ժամկետները ֆիքսված են: Այս կադապարը որոշ դեպքերում սահմանափակում է մեր գործողությունների ազատությունը, բայց այդ ժամկետը փոփոխման ենթակա չէ: Պրակտիկանտների՝ տարբեր հաստատություններում, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր, ակտիվ մասնակցությունը այնքան շատ էլ չի խրախուսվում, քանի որ կան որոշակի աշխատանքային պրոցեսներ, որոնց ուսանողներն իրավունք չունեն մասնակցելու: Ասածս այն է, որ մենք շատ ճկուն չենք կարող լինել այս հարցում, քանի որ միայն մեզանից չի կախված պրակտիկայի կազմակերպումն ու ընթացքը: Մասնագիտական ժամերն եք ուզում ավելացնել, բայց բոլորը չեն, որ կիսում են այդ կարծիքը: Չենք կարող կարևոր համարվող գիտակարգերը լիովին հանել դասընթացների ծրագրերից: Կարծում եմ, որ արժե անցնել Մոսկվա համակարգին, բայց խնդիրն այն է, որ մեր դասախոսներից շատերը խուսափում են համակարգչային ծրագրերից: Օնլայն ուսուցման առումով հնարավոր է պիլոտային համակարգով սկսել այն ներդնել ձեր ֆակուլտետում, բայց նախօրոք դրա հետ կապված բոլոր խնդիրները լուծելուց հետո: Եթե համաձայն եք, կարող ենք այդ հարցը քննարկել:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Միաձայն քվեարկության արդյունքում 2017-2018 ուս. տարվա ընթացքում Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի կատարած աշխատանքը գնահատել դրական:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

05 դեկտեմբերի, 2018 թ.